
ԵՊԲՀ ՔՈԼԵՋԻ «ՍՏՈՄ-ԲՈՒԺՔՈՒՅՐ/ԲՈՒԺԵՂԲԱՅՐ » ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ


Ուսանողների մասնակցություն 56 (92 %)

Հետադարձ կապին մասնակիցների քանակը վկայում է բարձր ակտիվության և արդյունքների ներկայացուցչական լինելու մասին:


1. **Նշեք որ կուրսում եք սովորում**



2. **Ձեր միջին առաջադիմությունը՝**




3. **Որքանո՞վ եք բավարարված ուսումնառության տարիների ընթացքում Ձեր ստացած տեսական գիտելիքներով** (գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ բացարձակ բավարարված չեմ, 5-ը՝ լիովին բավարարված եմ)



Ուսանողների մեծամասնությունը տեսական գիտելիքներից միջինից բարձր մակարդակի բավարարվածություն է արտահայտել:

Միևնույն ժամանակ առկա է որոշակի խումբ, որը գոհ չէ վերոնշյալ ցուցանիշից, ինչը վկայում է, որ բարելավման կարիք կա:

4. **Որքանո՞վ եք բավարարված ուսումնառության տարիների ընթացքում Ձեր ստացած գործնական հմտություններով** (գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ բացարձակ բավարարված չեմ, 5-ը՝ լիովին բավարարված եմ)




Գործնական հմտությունների մասով գնահատականները համեմատաբար ավելի հավասարակշռված են:

Չնայած բարձր գնահատականների առկայությանը, նկատվում է միջին գնահատականների շերտ, ինչը համահունչ է ուսանողների առաջարկներին՝ ավելացնել պրակտիկաները և գործնական պարապմունքները:


5. **Մասնագիտական առարկաների ուսումնասիրման ժամանակ բավարար չափով հասանելիություն ունեցել եք անհրաժեշտ գործիքների, տեխնիկական միջոցների, նյութերի**

(գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ բացարձակ հասանելիություն չեմ ունեցել, 5-ը՝ լիովին բավարարված եմ)




Գրաֆիկական տվյալները ցույց են տալիս, որ մասնագիտական առարկաների ուսումնասիրման ընթացքում անհրաժեշտ գործիքների, տեխնիկական միջոցների և նյութերի հասանելիության ցուցանիշը համեմատաբար ամենացածրն է մյուս գնահատվող չափանիշների համեմատ: Սա նշանակում է, որ ուսանողների մի զգալի հատված լիարժեք բավարարված չէ նյութատեխնիկական ապահովվածությունից, ինչը հանդիսանում է գործնական ուսուցման որակի վրա ազդող գործոն,

6. **Որքանով եք բավարարված անհրաժեշտ գրականության հասանելիությամբ** (գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ բացարձակ բավարարված չեմ, 5-ը՝ լիովին բավարարված եմ)




Գրաֆիկական տվյալները վկայում են միջինից բարձր բավարարվածության մասին: Այնուամենայնիվ, ցածր գնահատականների առկայությունը ցույց է տալիս, որ ուսանողների մի մասին հասանելի չի եղել անհրաժեշտ գրականություն:

7. **Որքանով լիարժեք և արդյունավետ են օգտագործվում դասաժամերը դասախոսների կողմից** (գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ բացարձակ ոչ լիարժեք և անարդյունավետ, 5-ը՝ լիարժեք և արդյունավետ)




Գրաֆիկները ցույց են տալիս, որ չնայած բարձր գնահատականների առկայությանը, կան ուսանողներ, որոնք դասաժամերի արդյունավետությունը գնահատել են միջին կամ ցածր մակարդակով:

8. **Ընդհանուր առմամբ որքանով եք բավարարված հանրակրթական առարկաների դասավանդման որակից** (գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ բացարձակ բավարարված չեմ, 5-ը՝ լիովին բավարարված եմ)



9. **Ընդհանուր առմամբ որքանով եք բավարարված մասնագիտական առարկաների դասավանդման որակից (**գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ բացարձակ բավարարված չեմ, 5-ը՝ լիովին բավարարված եմ**)**



8րդ և 9րդ գրաֆիկների տվյալները ցույց են տալիս, որ մասնագիտական առարկաների դասավանդման որակը ընդհանուր առմամբ ավելի բարձր է գնահատվել, քան հանրակրթական առարկաներինը: Ուսանողները բարձր գնահատում են մասնագիտական ուղղվածությունը և ակնկալում են դրա խորացում:

10. **Ինչը** և **ինչպես կփոխեիք ուսումնական գործընթացը առավել լավը** և **արդյունավետ դարձնելու համար** (եթե առաջարկը վերաբերվում է կոնկրետ առարկային/ամբիոնին, նշեք առարկայի անվանումը , խնդիրը և/կամ առաջարկությունը):
Սույն հարցին պատասխանել է 27 ուսանող, որոնց պատասխաններն առանց խմբագրման ներկայացված են հավելված 1ում

Ուսանողների կարծիքի ընդհանրացում

Հետադարձ կապի արդյունքները ցույց են տալիս, որ ուսանողների ընդհանուր վերաբերմունքը կրթական ծրագրի նկատմամբ միջինից բարձր բավարարվածության շրջանակում է, սակայն առկա են մի շարք կարևոր խնդիրներ և ակնկալիքներ:

Ուսանողների գերակշիռ մասը կարևորում է մասնագիտական առարկաները և ցանկանում է՝

- ավելացնել մասնագիտական դասաժամերը,
- մեծացնել գործնական պարապմունքների և պրակտիկայի ծավալը,
- ապահովել նյութի ավելի խորացված և հասկանալի բացատրություն:

Նրանք ակնկալում են ավելի կիրառական և ապագա մասնագիտությանը ուղղված կրթություն:

Մի շարք առարկաների դեպքում (հատկապես քիմիա) ուսանողները նշում են՝

- նյութի խտացվածություն,
- անհասկանալի բացատրություններ,
- դասաժամերի ոչ արդյունավետ օգտագործում:

Գործիքների և նյութերի հասանելիությունը գնահատվել է համեմատաբար ավելի ցածր, քան մյուս չափանիշները:

Ուսանողները ցանկանում են ավելի շատ գործնական աշխատանք, սակայն առկա են նյութատեխնիկական սահմանափակումներ, որոնք կարող են ազդել ուսուցման արդյունավետության վրա:

Նշվել են խնդիրներ՝

- անհավասար ծանրաբեռնվածություն օրերի միջև,
- մեկ օրվա ընթացքում չափազանց շատ դասեր,
- հերթափոխի կազմակերպման հարցեր:

Ընդհանուր եզրակացություն

Ուսանողները դրական են վերաբերվում ծրագրին, սակայն ունեն հստակ ակնկալիք՝

- ✓ կրթության ավելի կիրառական և մասնագիտական ուղղվածության,
- ✓ գործնական բաղադրիչի կատարելագործման,
- ✓ դասավանդման մեթոդների բարելավման,
- ✓ նյութատեխնիկական բազայի զարգացման
- ✓ դասացուցակի օպտիմալացման,

Առաջարկություններ կրթական ծրագրի բարելավման համար

Կրթական ծրագրի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ուսանողների հետադարձ կապի վերլուծության արդյունքում առաջարկվում է իրականացնել հետևյալ քայլերը՝

1. Գործնական ուսուցման բարելավում

Ավելացնել գործնական պարապմունքների, լաբորատոր աշխատանքների և պրակտիկաների քանակը:

2. Դասավանդման մեթոդների բարելավում

Խրախուսել ժամանակակից և ինտերակտիվ դասավանդման մեթոդների կիրառումը, ինչպես նաև կազմակերպել դասախոսների մասնագիտական վերապատրաստումներ՝ ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

3. Նյութատեխնիկական բազայի զարգացում

Ապահովել ուսանողների ավելի լայն հասանելիություն լաբորատոր սարքավորումներին, տեխնիկական միջոցներին և գործնական պարապմունքների համար անհրաժեշտ նյութերին:

4. Դասացուցակի օպտիմալացում

Վերանայել դասացուցակի կառուցվածքը՝ ապահովելով դասաժամերի հավասարակշռված բաշխում շաբաթվա ընթացքում և նվազեցնելով մեկ օրվա ընթացքում դասերի չափազանց մեծ ծանրաբեռնվածությունը:

5. Մասնագիտական ուղղվածության ուժեղացում

Կրթական ծրագրում մեծացնել մասնագիտական առարկաների մասնաբաժինը և հնարավորության դեպքում կրճատել որոշ ոչ մասնագիտական առարկաների ծավալը՝ ուսուցումը դարձնելով առավել կիրառական և մասնագիտական:

6. Ուսումնական նյութերի հասանելիության ընդլայնում

Ավելացնել մասնագիտական գրականության և ուսումնամեթոդական նյութերի հասանելիությունը ինչպես գրադարանում, այնպես էլ առցանց հարթակներում:

Հավելված 1

1. Դասերը լինեն առաջին հերթով
2. Մաթեմատիկա առարկան,դասաժամերը անցնում են անարդյունավետ,ուսուցիչը չի բացատրում նյութը պարզ
3. Դասացուցակից հանել լանդշաֆտագիտությունը փոխել կենսաբանությունով
4. Ավելի մասնագիտական առարկաներ կավելացնեի
5. ավելացնել գործնական դասընթացները
6. Ռուսաց լեզվի դասընթացը անհետաքրքիր է, ոսուցչուհին ագրեսիվ
7. Մասնագիտական առարկաների , գործնական աշխատանքների, պրակտիկաների ավելացում
8. դժգոհեմ քիմիայի դասաժամերից, մասնագիտական առարակա է բայց դասախոսը շատ վատ է դասերը բացատրում, ոչինչ չենք հասկանում
9. Քիմիայի դասերը անհասկանալի են
10. Քիմիայի դասերը առաջին կուրսում ոչ արդյունավետ են, թեմաները շատ թռուցիկ են բացատրվում և անհասկանալի
11. Քիմիայի դասընթացները առաջին կուրսում ոչ արդյունավետ են
12. Լանդշաֆտագիտությունը փոխարինել կենսաբանությամբ
13. 1հերթ լինի

14. "Լանդշաֆտագիտություն" առարկան փոխարինել "քիմիա" կամ "կենսաբանություն" առարկայով, քանզի գտնում եմ, որ այդ 2 առարկաները մեզ ավելի պետք կգան միասնական քննություն հանձնելու համար:
15. Առաջին հերթ լինել և 1կուրսում մասնագիտական առարկա անցնենք
16. Ցանկալի է դասապրոցեսի ժամանակ այն ավելի հետաքրքիր և արդյունավետ դարձնելու համար կիրառել և զարգացնել ավելի շատ գործնական գիտելիքներ
17. ավելացնել մասնագիտական առարկաներ,պրակտիկաներ
18. Ֆիզկուլտուրային է վերաբերվում: Եթե կան ուսանողներ, ովքեր ազատված են այդ դասաժամից, խնդրում ենք այդ և հաջորդթիվ առարկաներն այնպես դասավորել, որպեսզի ազատված ուսանողները այդ ժամին ազատ չնստեն, այդ օրվա դասաժամերն ավարտեն իրենց հասանելիք ու գնան, քանի որ շատերը համալսարանի ընդունելության համար պարապում են առարկաներ, որոնց ևս պետք է հասնեն: Նախապես՝ շնորհակալություն:
19. ավելի շատ պրակտիկա
20. Կուզեի, որ մասնագիտական առարկաներին ավելի շատ ուշադրություն դարձվեր, և ավելացվեր գործնական պարապմունքների ու պրակտիկայի ժամաքանակը, որպեսզի ավելի լավ պատրաստվենք ապագա մասնագիտությանը
21. Դասացուցակները ավելի հասանելի կդարձնեյի ,որովհետև 1-2 դաս կա ,և նույն օրվա մեջ 9-10 դաս կա ,ինչը շատ հոգնեցնող է ,և դասերին առույգ չենք մասնակցում (ինչքան որ կցանկանայինք, ,և ինչքան որ դասախոսներն ակնկալում է) :
22. Ավելի խորացված բացատրվեն մասնագիտական առարկաները:
23. մասնագիտական առարկաների, հաստկապես քիմիայի նյութերը շատ են և բարդ, իսկ դասաժամերը քիչ
24. Լանդշաֆտագիտությունը փոխարինել կենսաբանությունով:
25. Լանդշաֆտագիությունը փոխարինել կենսաբանություն առարկայով
26. Կրճատել ոչ մասնագիտական առարկաները
27. 1ին կուրսում քիմիայի դասընթացները չափազանց խտացված են,անհասկանալի և ոչ տպավորիչ